ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N 16/17-2 որոշման

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար *տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների* ձեռքբերման N «**ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀՇՁԲ-15/3-16/17**» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **25.03.2016թ.**

Մասնակցում էին՝ **Նախագահ՝** Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ Դ. Գասպարյան, Դ. Ադամյան, Կ. Անդրիասյան, Ս. Ադամյան

Քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

Հրավիրված անդամ՝

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ ջրի տրանսպորտի բաժնի պետ՝ Ա. Սիմոնյան

Նիստին ներկա էր «Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ ներկայացուցիչը

1. Տեղեկություններ գնման նախնական պայմանագիր կնքած այն անձանց (անձի) մասին, որոնց պատվիրատուն ուղարկել է գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում

«**ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀՇՁԲ-15/3-16/17**» ծածկագրով մրցույթի շրջանակներում carayutyun-15-3@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեով հայտ է ուղարկվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, միաժամանակ հայտարարությունը տեղադրվել է http://gnumner.am/?module=hosting&utility=file_download&file=165702 հասցեում:

2. Տեղեկություններ գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների մասին

	Մասնակցի	
	Անվանումը	**Գնային առաջարկը ներկայացնելու ամիսը, ամսաթիվը**
	«Մեգամոթորս» ՍՊԸ	25.03.2016թ.
	«Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ	25.03.2016թ.

2.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են 25.03.2015թ. Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակում:

2.2 Գնային առաջարկներ այլ մասնակիցներ չեն ներկայացրել:

3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

«Մեգամոթորս» և «Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է կողմ 5, դեմ 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

N « **ՀՀԳՆԶՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԾՁԲ-15/3-16/17**» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված կարգով մասնակիցները փակ կնքված ծրարով ներկայացրել էին գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իրենց հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ծառայությունների մատուցման մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

5. Մասնակիցների գնային առաջարկները

«Մեգամոթորս» և «Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Հաշվարկային առաջարկները / դրամ/			
			«Մեգամոթորս» ՍՊԸ		«Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	Գինը	Առանց ԱԱՀ	Գինը
1	***Կորեական արտադրության 4x4 ամենագնացների (HYUNDAI TUCSON, KIA Sportage տրանսպորտային միջոցների) տեխնիկական սպասարկման ծառայություններ***	լրա կազմ			11 750 110	11 857 802
2	***Ռուսական արտադրության 4x4 ամենագնացների (ՆԻՎԱ 21230 GLS, ՎԱԶ 2121 և ՈՒԱԶ մակնիշի տրանսպորտային միջոցների) տեխնիկական սպասարկման ծառայություններ***	լրա կազմ	55 527 556	60 036 700	55 062 864	55 618 751

«Մեգամոթորս» և «Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35. կետի 2-րդ ենթակետի «բ» մասով՝ գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներին (ըստ առանձին չափաբաժինների) տրվել է մինչև 15 տոկոս գնային առավելություն, ըստ որի.

6.1.1

1. չափաբաժնով — 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել **«Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ-ին**

6.1.2

2. չափաբաժնով — 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել **«Կարկոմավտոսերվիս» ՍՊԸ-ին**
2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Մեգամոթորս» ՍՊԸ-ին

6.2 Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝

6.2.1 Սույն արձանագրության լուսապատճենը տրամադրել մասնակիցներին,

6.2.2 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով՝

ա/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ըստ առանձին չափաբաժինների առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ,

բ/. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 02.04.2016թ-ին ժ. 10:00-ին ՝ «ք. Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակ» հասցեում:

Ընդունվել է կողմ 5, դեմ 0:

7. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Արմեն Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ..... Դավիթ Գասպարյան

..... Կարեն Անդրիասյան

..... Դավիթ Ադամյան

..... Սերգեյ Ադամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Հայկ Հովհաննիսյան